ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2941-Ա « 12 » հունիսի 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4–Ի Հ.774–Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով /այսուհետև՝ օրենք/, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 4–ի հ.774-Ն որոշումը, Երևան քաղաքում 2026 թվականի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ամառային զորակոչի անցկացման աշխատանքների համակարգման նպատակով.

1. Ընդունել ի գիտություն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 4–ի հ.774-Ն որոշման 6-րդ կետով ստեղծվել է Երևանի քաղաքային զորակոչային հանձնաժողով:

2. Հանձնարարել.

1) Երևանի քաղաքային զորակոչային հանձնաժողովին՝ առաջարկություն ներկայացնել հանրապետական զորակոչային հանձնաժողով՝ օրենքի 24–րդ հոդվածի 4–րդ մասով նախատեսված հիմքով քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կամ քաղաքացու դիմումը մերժելու վերաբերյալ.

2) Երևանի վարչական շրջանների ղեկավարներին՝ մասնակցել զորակոչի կազմակերպմանը և աջակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Երևանի զինվորական կոմիսարիատներին.

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատի Երևանի զինվորական կոմիսարիատներին ապահովել ավտոտրանսպորտային միջոցներով:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առաջին և զորակոչային հարցերի կազմակերպման բաժնի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ